# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության
Կոտայքի մարզի Գառնի համայնք
Ստ. Շահումյան 4
garnihamaynq@mail.ru

ՈՐՈՇՈՒՄ

«26» ԱՊՐԻԼԻ 2021ԹՎԱԿԱՆԻ N 117-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀՆԱՐԱՎՈՐ ՋՐՀԵՂԵՂՆԵՐԻ, ՀԵՂԵՂՈՒՄՆԵՐԻ, ՍԵԼԱՎՆԵՐԻ, ՔԱՐԱԹԱՓՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՍՈՂԱՆՔՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ, ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՈՒ ՎԵՐԱՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» օրենքի 16-րդ հոդվածի պահանջներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2021 թվականի մարտի 31-ի N 92-Ա որոշումը, ***որոշում եմ***

1.Հաստատել՝

1)Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գառնի համայնքի տարածքում հնարավոր ջրհեղեղների, հեղեղումների, սելավների, քարաթափումների և սողանքների կանխարգելման, հետևանքների նվազեցման ու վերացման միջոցառումների պլանը՝ համաձայն N 1 հավելվածի,

2)Տեղեկություններ համայնքի հակահեղեղային կառույցների հաշվառման վերաբերյալ՝ համաձայն N 2 հավելվածի,

3)Առաջարկություններ՝ համայնքին սպառնացող պոտենցիալ վտանգավոր տեղամասերի և բնակչության անվտանգության ապահովման ուղղությամբ նախատեսվող միջոցառումների վերաբերյալ՝ համաձայն N 3 հավելվածի:

2.Մինչև 2021 թվականի մայիսի 01-ը Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Կոտայքի մարզային փրկարարական վարչություն ներկայացնել սույն որոշման 1-ին կետով հաստատված փաստաթղթերը:

3.Սույն որոշման կատարման հսկողությանը դնել համայնքի ղեկավարի տեղակալ Վարդան Մարտիրոսյանի վրա:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Համայնքի ղեկավար՝ Ա. Սահակյան

2021թ. ապրիլի 26

գ.Գառնի

Հավելված 1
ՀՀ Կոտայքի մարզի Գառնի համայնքի
ղեկավարի 2021 թվականի
ապրիլի 26-ի N 117-Ա որոշման

# ՊԼԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀՆԱՐԱՎՈՐ ՋՐՀԵՂԵՂՆԵՐԻ, ՀԵՂԵՂՈՒՄՆԵՐԻ, ՍԵԼԱՎՆԵՐԻ, ՔԱՐԱԹԱՓՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՍՈՂԱՆՔՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ, ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՈՒ ՎԵՐԱՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

| Հ/հ | Միջոցառումների անվանումը | Կատարող | Կատարման ժամկետը |
|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 |
| | **1. Կանխարգելիչ միջոցառումներ** | | |
| 1 | Ուսումնասիրել սելավատարների վիճակը և արդյունքները ներկայացնել Կոտայքի մարզային փրկարարական վարչություն | Համայնքի ղեկավարի տեղակալ | Մինչև 2021 թվականի մայիսի 01-ը |
| 2 | Նախապատրաստել համապատասխան տեխնիկա սելավատարերի անհրաժեշտ հատվածները մաքրելու համար: | | |
| 3 | Մաքրել համայնքի սելավատարերը: Վտանգավոր տեղամասերում ամրացնել ափապաշտպան կառույցները: | | Մինչև 2021 թվականի մայիսի 01-ը |
| 4 | Բնակչության հետ կատարել բացատրական աշխատանքներ՝ ջրածածկման, հեղեղավտանգ, սելավավտանգ և սողանքավտանգ գոտիներում դաշտային աշխատանքները կարգավորելու համար: | | Մշտական |
| 5 | Տարվա ընթացքում ուժեղացնել հսկողությունը օդի ջերմաստիճանի և ճնշման փոփոխությունների նկատմամբ  Կտրուկ փոփոխությունների ժամանակ անմիջապես ստացված տվյալները հայտնել Կոտայքի մարզային փրկարարական վարչություն: | Քաղաքացիական պաշտպանության շտաբի պետ | Անհրաժեշտության դեպքում, սկսած 2021 թվականի մայիսի 01-ը |
| | **2. Հիմնականմիջոցառումներ** | | |
| 6 | Իրազեկել վտանգավոր տարածքներում գտնվող բնակչությանը՝ իրենց սպառնացող վտանգների, նկուղային հարկերից իրենց ունեցվածքի տեղափոխման անհրաժեշտության, ինչպես նաև նման դեպքերում բնակչության վարվելակերպի կանոնների մասին: | Քաղաքացիական պաշտպանության շտաբի պետ | Մշտապես |
| 7 | Հնարավոր  վտանգավոր վայրերում կազմակերպել հսկողություն՝ արագ արձագանքելու և համապատասխան միջոցներ ձեռնարկելու համար: | Համայնքի ղեկավարի տեղակալ | Անհրաժեշտության դեպքում |
| 8 | Անհրաժեշտության դեպքում կազմակերպել և իրականացնել վտանգավոր տարածքներից անվտանգ տարածք՝ մարդկանց, կենդանիների և նյութական արժեքների ժամանակավոր | Տարհանման հանձնաժողովի նախագահ, համայնքի ղեկավարի | Անհրաժեշտության դեպքում |

| | | | |
|---|---|---|---|
| | տեղափոխումը և տեղաբաշխումը: | տեղակալ | |
| 9 | Տուժած շրջաններում կազմակերպել և իրականացնել փրկարարական և այլ անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքներ: | Համայքի ղեկավարի տեղակալ | Ըստ անհրաժեշտության |
| 10 | Ներգրավել աշխատունակ քաղաքացիներին (իրենց համաձայնությամբ), ջրհեղեղների, հեղեղումների, սելավների և սողանքների պատճառած հետևանքների վերացման գործընթացին՝ ըստ մասնագիտական և անձնական հնարավո-րությունների: | Համյանքի ղեկավարի տեղակալ | Անհրաժեշտության դեպքում |
| 11 | Ապահովել կապը աղետի շրջանում գտնվող համայնքների, կազմակերպությունների, հիմնարկ-ձեռնարկությունների և մարզի արտակարգ իրավիճակների մշտական գործող հանձնաժողովի միջև: | «ՎԵՈՆ Արմենիա» ՓԲԸ-ի Կոտայքի տարածքային կենտրոն | |
| 12 | Գիշերային ժամերին փրկարարական և վթարավերականգնողական աշխատանքները շարունակելու համար ապահովել համապատասխան լուսավորվածություն: | «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ն «Գեղամա» մասնաճյուղ «Գառնիի կոմունալ տնտեսության» ՀՈԱԿ | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՍԱՀԱԿՅԱՆ

Հավելված 2
ՀՀ Կոտայքի մարզի Գառնի համայնքի
ղեկավարի 2021 թվականի
ապրիլի 26-ի N 117-Ա որոշման

# ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

## Գառնի համայնքի հակահեղեղային կառույցների (կառույցի) հաշվառման

| Հ/հ | Կառույցի տեղադրությունը (բնակավայր, գետավազան, վտակ) | Կառույցի տիպը (հեղեղատար, հեղեղակարգավորիչ, բառաժ) | Կառույցի | | | | Կառույցի տեղանքի սեյսմիկության աստիճանը (բալ) | Մոտակա բնակավայրերի և կառուցվածքների անվանումը, որոնք կարող են տուժել կառույցի անբավարար աշխատանքի հետևանքով | Կառույցի տեխնիկական վիճակը (բավարար, անբավարար) |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | երկարությունը (մ) | լայնությունը (մ) | խորությունը (մ) | Կողեզրերի թեքությունը, (0) | | | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 |
| 1 | --- | ---- | ---- | ---- | ---- | ---- | ---- | ---- | ----- |
| | | | | | | | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Մ. ՍԱՀԱԿՅԱՆ

Հավելված 3
ՀՀ Կոտայքի մարզի Գառնի համայնքի
ղեկավարի 2021 թվականի
Ապրիլի 26-ի N 117-Ա որոշման

# ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ

## Ջրվեժ համայնքին սպառնացող պոտենցիալ վտանգավոր տեղամասերի և բնակչության անվտանգության ապահովման ուղղությամբ միջոցառումների վերաբերյալ

| | |
|---|---|
| 1. Վտանգի (աղետի) անվանումը(ները)<br>-սելավ<br>-հեղեղում<br>-սողանք<br>-քարաթափում<br>-և այլն | Գարնանային սելավ և քարաթափում |
| 2. Վտանգավոր տեղամասի գտնվելու վայրը(երը) | Սելավ գյուղի 3-րդ 4-րդ և 5-րդ թաղամասերի եզրին իսկ քարաթափումը Վ. Համբարձումյան փողոցի վերջնամասում և Գառնիի ձոր տանող ճանապարհի ձախ եզրին: |
| 3. Առաջացման հնարավոր պատճառները | Գարնան ջերմաստիճանի կտրուկ բարձրացման հետևանքով առաջացած ձնհալի ջրերի ինչպես նաև հորդառատ անձրևների հետևանքով |
| 4. Վտանգավոր տեղամասերի նկարագրությունը:<br>Վտանգավոր գոտում գտնվող շենքերի, շինությունների և բնակչության թիվը | Սելավի վտանգավոր տեղամաս է համարվում գյուղի սելավի աջ և ձախ հատվածները որտեղ բնակեցված են առկա են թվով մոտ 100 տնամերձ հողամասեր և տներ որտեղ բնակվում են մոտ 400 բնակիչներ իսկ քարաթափման ճանապարհի աջակողմյան հատվածում վտանգի տակ է թվով 8-10 տներ որտեղ բնակվում են մոտ 40 մարդ |
| 5. Կանխարգելիչ միջոցառումների առաջարկություններր իրակա-նացնելու համար | Աիրաժեշտ է մաքրել սելավի հունը, կատարել սելավի կողերի ամրացում մետաղյա ցանցերով (գաբիոններ), իսկ քարաթափման տեղամասերում կատարել քարահեռացման աշխատանքներ: |
| 6. Համայնքների բյուջեներում կամ այլ ծրագրերով 2020 թվականին պլանավորված, հնարավոր արտակարգ իրավիճակների կանխարգելիչ միջոցառումների համար ծախսերի չափը ըստ միջոցառումների տեսակների | 1. Փրկարարական ծառայություն՝ 1150000 ՀՀ դրամ<br><br>2. Քաղաքացիական ծառայություն՝ 200.000 ՀՀ դրամ<br><br>3. Այլ պաշտպանություն՝ 350.000 ՀՀ դարմ |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՍԱՀԱԿՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության
Կոտայքի մարզի Գառնի համայնք
Ստ. Շահումյան 4
garnihamaynq@mail.ru

ՈՐՈՇՈՒՄ

«27» ԱՊՐԻԼԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ N 118

## ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՔԱՂԱՔԱՑՈՒ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՑԱԾՐԱՐԺԵՔ (5-ՐԴ ԿԱՐԳԻ ՎԱՐԵԼԱՀՈՂԸ) ՀՈՂԱՏԵՍՔԸ ԲԱՐՁՐԱՐԺԵՔ (ՋՐՈՎԻ 5-ՐԴ ԿԱՐԳԻ ԽԱՂՈՂԻ ԱՅԳԻ) ՀՈՂԱՏԵՍՔԵՐՈՎ ՓՈԽԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով հողային օրենսգրքի 2-րդ հոդվածի 4-րդ կետով, ՀՀ կառավարության 17 սեպտեմբերի 2009թ. գյուղատնտեսական նշանակության հողերի հողատեսքերի փոփոխման կարգը հաստատելու մասին N 1066-Ն որոշմամբ հաստատված կարգի 7,8 և 9 կետերով և հաշվի առնելով ,որ վարելահողում կատարվել է բարելավում և այժմ դարձել է լիարժեք ջրովի խաղողի այգի ***որոշում եմ՝***

1. Գառնի համայնքում սեփականության իրավունքով պատկանող սեփականաշնորհված գյուղատնտեսական նշանակության 0,10870 հա (ծածկագիր 07-021-0381-0014 ) ցածրարժեք գյուղատնտեսական նշանակության վարելահողը փոխել բարձրարժեք ջրովի 5-րդ կարգի խաղողի այգի հողատեսքով :
2. Որոշման մեկ օրինակը սահմանված ժամկետում ուղարկել ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի մարզերի միավորված ստորաբաժանում:
3. Ուժը կորցրած ճանաչել Գառնի համայնքի ղեկավարի 2021թվականի ապրիլի 05-ի թիվ 89 որոշումը

Համայնքի ղեկավար՝ Ա. Սահակյան

2021թ. ապրիլի 27

գ.Գառնի

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության
Կոտայքի մարզի Գառնի համայնք
Ստ. Շահումյան 4
garnihamaynq@mail.ru

ՈՐՈՇՈՒՄ

«27» ԱՊՐԻԼԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ N 119

ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՔԱՂԱՔԱՑՈՒ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԲԱԶՄԱՄՅԱ ԽԱՂՈՂԻ ԱՅԳՈՒ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՓԱՍՏԱՑԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՉԱՓՈՎ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով <<Ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների և ինքնակամ զբաղեցրած հողամասի իրավական կարգավիճակի մասին>> Հայաստանի Հանրապետության 2002թվականի դեկտեմբերի 26-ին ընդունված օրենքի 7-րդ հոդվածի 1-ին կետի դրույթներով, հաշվի առնելով, որ օրինական հատկացված հողամասին կից ինքնակամ զբաղեցրած հողամասը և օրինական հատկացված հողամասը մինչև 2001թ-ի մայիսի 15-ը ունեցել է նույն սահմանագիծը և փաստացի օգտագործել և մինչ օրս օգտագործվում է սեփականատերի կողմից, քարտեզագրվել և նույն սահմանագծով ճանաչվել է որպես մեկ միավոր ինչը երևում է համայնքի հողակադաստրային քարտեզում և այն որ օրինական և նշված ինքնակամ զբաղեցրած հողամասը չի գտնվում հողային օրենսգրքի 60 հոդվածով սահմանված հողամասերի շարքում, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, սեփականության իրավունքի ճանաչումը չի սահմանափակվում այլ անձանց իրավունքները, չի առաջացնում սերվիտուտ ***որոշում եմ՝***

1. Գրիգոր Սպարտակի Գրիգորյանի կողմից փաստացի օգտագործվող 0.10870 հա սեփական բազմամյա խաղողի այգի հողամասի ծածկագիր 07-021-0381-0014 սեփականության իրավունքը ճանաչել ամբողջությամբ:
2. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:
3. Ուժը կորցրած ճանաչել Գառնի համայնքի ղեկավարի 2021թվականի ապրիլի 05-ի թիվ 87 որոշումը

Համայնքի ղեկավար Ա. Սահակյան

2021թ. ապրիլի 27
գ.Գառնի

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության
Կոտայքի մարզի Գառնի համայնք
Ստ. Շահումյան 4
garnihamaynq@mail.ru

ՈՐՈՇՈՒՄ

«28» ԱՊՐԻԼԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ N 120

### ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ Գ. ՋՈՀՐԱՊԻ ՓՈՂՈՑ 1-ԻՆ ՓԱԿՈՒՂԻ ԹԻՎ 1 ՀԱՍՑԵՈՒՄ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՓԱՍՏԱՑԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՉԱՓՈՎ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով <<Ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների և ինքնակամ զբաղեցրած հողամասի իրավական կարգավիճակի մասին>> Հայաստանի Հանրապետության 2002թվականի դեկտեմբերի 26-ին ընդունված օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ կետի ա) ենթակետի դրույթներով, հաշվի առնելով, որ օրինական հատկացված տնամերձ հողամասին կից ինքնակամ զբաղեցրած հողամասը և օրինական հատկացված հողամասը մինչև 2001թ-ի մայիսի 15-ը ունեցել է նույն սահմանագիծը և փաստացի օգտագործել և մինչ օրս օգտագործվում է սեփականատերերի կողմից, քարտեզագրվել և նույն սահմանագծով ճանաչվել է որպես մեկ միավոր ինչը երևում է համայնքի հողակադաստրային քարտեզում և այն որ օրինական և նշված ինքնակամ զբաղեցրած հողամասը չի գտնվում հողային օրենսգրքի 60 հոդվածով սահմանված հողամասերի շարքում, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, սեփականության իրավունքի ճանաչումը չի սահմանափակվում այլ անձանց իրավունքները, չի առաջացնում սերվիտուտ, ***որոշում եմ՝***

1. Կորյուն, Սիրուն Ավետիսյաններ, Սիրամարգ Պապիկյան, Կալիպսե Հակոբյանի կողմից փաստացի օգտագործվող՝ 07-021-0084-0026 ծածկագրում, 0.11873հա հողամասի սեփականության իրավունքը ճանաչել ամբողջությամբ:
2. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից

Համայնքի ղեկավար՝ **Ա. Սահակյան**

2021թ. ապրիլի 28
գ.Գառնի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության
Կոտայքի մարզի Գառնի համայնք
Ստ. Շահումյան 4
garnihamaynq@mail.ru

## ՈՐՈՇՈՒՄ

«28» ԱՊՐԻԼԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ N 121

## ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԲԱԶՄԱՄՅԱ ՏՆԿԱՐՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՓԱՍՏԱՑԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՉԱՓՈՎ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով <<Ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների և ինքնակամ զբաղեցրած հողամասի իրավական կարգավիճակի մասին>> Հայաստանի Հանրապետության 2002թվականի դեկտեմբերի 26-ին ընդունված օրենքի 7-րդ հոդվածի 1-ին կետի դրույթներով, հաշվի առնելով, որ օրինական հատկացված հողամասին կից ինքնակամ զբաղեցրած հողամասը և օրինական հատկացված հողամասը մինչև 2001թ-ի մայիսի 15-ը ունեցել է նույն սահմանագիծը և փաստացի օգտագործել և մինչ օրս օգտագործվում է սեփականատերի կողմից, քարտեզագրվել և նույն սահմանագծով ճանաչվել է որպես մեկ միավոր ինչը երևում է համայնքի հողակադաստրային քարտեզում և այն որ օրինական և նշված ինքնակամ զբաղեցրած հողամասը չի գտնվում հողային օրենսգրքի 60 հոդվածով սահմանված հողամասերի շարքում, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, սեփականության իրավունքի ճանաչումը չի սահմանափակվում այլ անձանց իրավունքները, չի առաջացնում սերվիտուտ ***որոշում եմ՝***

1. Կորյուն, Սիրուն Ավետիսյաններ, Սիրամարգ Պապիկյան, Կալիպսե Հակոբյանի կողմից փաստացի օգտագործվող 0.31265 հա սեփական բազմամյա հնդավոր տնկարքի հողամասի ծածկագիր 07-021-0295-0011 սեփականության իրավունքը ճանաչել ամբողջությամբ:
2. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

Համայնքի ղեկավար՝ Ա. Սահակյան

2021թ. ապրիլի 28
գ.Գառնի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության
Կոտայքի մարզի Գառնի համայնք
Ստ. Շահումյան 4
garnihamaynq@mail.ru

ՈՐՈՇՈՒՄ

«28» ԱՊՐԻԼԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ N 122

ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԽՈՏՀԱՐՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՓԱՍՏԱՑԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՉԱՓՈՎ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով <<Ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների և ինքնակամ զբաղեցրած հողամասի իրավական կարգավիճակի մասին>> Հայաստանի Հանրապետության 2002թվականի դեկտեմբերի 26-ին ընդունված օրենքի 7-րդ հոդվածի 1-ին կետի դրույթներով, հաշվի առնելով, որ օրինական հատկացված հողամասին կից ինքնակամ զբաղեցրած հողամասը և օրինական հատկացված հողամասը մինչև 2001թ-ի մայիսի 15-ը ունեցել է նույն սահմանագիծը և փաստացի օգտագործել և մինչ օրս օգտագործվում է սեփականատերի կողմից, քարտեզագրվել և նույն սահմանագծով ճանաչվել է որպես մեկ միավոր ինչը երևում է համայնքի հողակադաստրային քարտեզում և այն որ օրինական և նշված ինքնակամ զբաղեցրած հողամասը չի գտնվում հողային օրենսգրքի 60 հոդվածով սահմանված հողամասերի շարքում, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, սեփականության իրավունքի ճանաչումը չի սահմանափակվում այլ անձանց իրավունքները, չի առաջացնում սերվիտուտ ***որոշում եմ՝***

1. Կորյուն, Սիրուն Ավետիսյաններ, Սիրամարգ Պապիկյան, Կալիպսե Հակոբյանի կողմից փաստացի օգտագործվող 0.12845 հա սեփական խոտհարքի հողամասի ծածկագիր 07-021-0206-0088 սեփականության իրավունքը ճանաչել ամբողջությամբ:
2. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

Համայնքի ղեկավար՝ Ա. Սահակյան

2021թ. ապրիլի 28
գ.Գառնի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության
Կոտայքի մարզի Գառնի համայնք
Ստ. Շահումյան 4
garnihamaynq@mail.ru

ՈՐՈՇՈՒՄ

<<03>> ՄԱՅԻՍԻ 2021ԹՎԱԿԱՆԻ N 123

## ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Համաձայն <<Տեղական Ինքնակառավարման Մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35 հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով ***որոշում եմ՝***

Գառնի համայնքային սեփականություն հոմարվող բնակավայրի նշանակության 0.035635 հա հողատարածքին 07-021-0087- ծածկագրի տրամադրել հասցե՝ Գառնի համայնք Նալբանդյան փողոց 4-րդ փակուղի թիվ 2/1

Համայնքի ղեկավար՝ Ա. Սահակյան

2021թ. մայիսի 03

գ.Գառնի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության
Կոտայքի մարզի Գառնի համայնք
Ստ. Շահումյան 4 garnihamaynq@mail.ru

ՈՐՈՇՈՒՄ

«03» ՄԱՅԻՍԻ 2021ԹՎԱԿԱՆԻ N 124

ԳԱՌՆԻԻ ՀԱՄԱՅՆՔԻ Գ.ԳԱՌՆԻ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ ՓՈՂՈՑ 4-ՐԴ ՓԱԿՈՒՂԻ ԹԻՎ 2/1 ՀԱՍՑԵՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասով , Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ ***որոշում եմ՝***

1.Գառնի համայնքում համայնքային սեփականություն համարվող բնակավայրերի նշանակության 07-021-0087-ծածկագրից 0.035635 հա բնակավայրի այլ հողամասի գործառնական նշանակությունը փոխել բնակելի կառուցապատման:
2. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդող օրվանից:

Համայնքի ղեկավար՝ ***Ա. Սահակյան***

2021թ. մայիսի 03-ի

գ.Գառնի

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության
Կոտայքի մարզի Գառնի համայնք
Ստ. Շահումյան 4
garnihamaynq@mail.ru

ՈՐՈՇՈՒՄ

«03» ՄԱՅԻՍԻ 2021ԹՎԱԿԱՆԻ N 125

### ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԻ ԽՈՒՄԲ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 48 հոդվածի 1-րդ մասի 3-րդ կետի հաշվի առնելով անապահով քաղաքացիների դիմումները ***որոշում եմ՝***

Կոտայքի մարզի Գառնի համայնքի մի խումբ ուսանողներին, տրամադրել ուսման վարձ համաձայն հավելվածի :

Համայնքի ղեկավար՝ Ա. Սահակյան

2021թ. մայիսի 03-ի

գ.Գառնի

ՀԱՎԵԼՎԱԾ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՌՆԻ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 03 ՄԱՅԻՍԻ 2021ԹՎԱԿԱՆԻ
N 125 ՈՐՈՇՄԱՆ

1. Տաթևիկ Մուրադխանյան 30000 դրամ
2. Մանե Յաղուբյան 40000 դրամ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության
Կոտայքի մարզի Գառնի համայնք
Ստ. Շահումյան 4
garnihamaynq@mail.ru

ՈՐՈՇՈՒՄ

«03» ՄԱՅԻՍԻ 2021ԹՎԱԿԱՆԻ N 126

ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԻ ԽՈՒՄԲ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 48 հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի հաշվի առնելով անապահով քաղաքացիների դիմումները ***որոշում եմ՝***

Կոտայքի մարզի Գառնի համայնքի մի խումբ սոցիալապես անապահով ընտանիքներին տրամադրել դրամական օգնություն համաձայն հավելվածի :

Համայնքի ղեկավար՝ Ա. Սահակյան

2021թ. մայիսի 03-ի

գ.Գառնի

ՀԱՎԵԼՎԱԾ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՌՆԻ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 03 ՄԱՅԻՍԻ 2021ԹՎԱԿԱՆԻ
N 126 ՈՐՈՇՄԱՆ

1. Նորիկ Սիրեկանյան 40000 դրամ
2. Շահեն Խաչատրյան 40000 դրամ
3. Վանիկ Շահբազյան 40000 դրամ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության
Կոտայքի մարզի Գառնի համայնք
Ստ. Շահումյան 4
garnihamayng@mail.ru

# ՈՐՈՇՈՒՄ

«05» ՄԱՅԻՍԻ 2021ԹՎԱԿԱՆԻ N 127

## <<ԹԱՅՄ ԹՈՒ ԻԹ >> ՍՊԸ-ԻՆ ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԻՐԱՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական Ինքնակառավարման Մասին>> օրենքի 45 հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով հիմք ընդունելով << ԹԱՅՄ ԹՈՒ ԻԹ >> ՍՊԸ-ԻՆ հայտը, բանկի անդորրագիր N 42476123 ***որոշում եմ***

Կոտայքի մարզի Գառնի համայնքի Ազատամարտիկների խճուղում գործող << ԹԱՅՄ ԹՈՒ ԻԹ >> ՍՊԸ-ի տալ թույլտվություն 2021թ. ապրիլի 01-ից մինչև սույն թվականի հունիսի 30-ը հանրային սննդի կազմակերպման և իրացման վերաբերյալ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄԱՀԱԿՅԱՆ

2021թ. մայիսի 05-ի

գ.Գառնի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության
Կոտայքի մարզի Գառնի համայնք
Ստ. Շահումյան 4
garnihamaynq@mail.ru

## ՈՐՈՇՈՒՄ

«05» ՄԱՅԻՍԻ 2021ԹՎԱԿԱՆԻ N 128

### <<ԹԱՅՄ ԹՈՒ ԻԹ >> ՍՊԸ-ԻՆ ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ՕԲԵԿՏՆԵՐՈՒՄ՝ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ԻՐԱՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական Ինքնակառավարման Մասին>> օրենքի 45 հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով հիմք ընդունելով <<ԹԱՅՄ ԹՈՒ ԻԹ >> ՍՊԸ-ի հայտը անդորրագիր N 42476125 ***որոշում եմ՝***

Կոտայքի մարզի Գառնի համայնքի Ազատամարտիկների խճուղում գործող << ԹԱՅՄ ԹՈՒ ԻԹ >> ՍՊԸ-ի տալ թույլտվություն 2021թվականի,ապրիլի 01-ից մինչև սույն թվականի հունիսի 30-ը ոգելից և ալկոհոլային խմիչքների իրացման վերաբերյալ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՍԱՀԱԿՅԱՆ

2021թ. մայիսի 05-ի

գ.Գառնի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության
Կոտայքի մարզի Գառնի համայնք
Ստ. Շահումյան 4
garnihamaynq@mail.ru

# ՈՐՈՇՈՒՄ

«05» ՄԱՅԻՍԻ 2021ԹՎԱԿԱՆԻ N 129

## <<ԹԱՅՄ ԹՈՒ ԻԹ >> ՍՊԸ-ԻՆ ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ՕԲԵԿՏՆԵՐՈՒՄ՝ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ԻՐԱՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական Ինքնակառավարման Մասին>> օրենքի 45 հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով հիմք ընդունելով <<ԹԱՅՄ ԹՈՒ ԻԹ >> ՍՊԸ-ի հայտը անդորրագիր N 42476124 ***որոշում եմ՝***

1.Կոտայքի մարզի Գառնի համայնքի Ազատամարտիկների խճուղում գործող << ԹԱՅՄ ԹՈՒ ԻԹ >> ՍՊԸ-ի տալ թույլտվություն 2021թվականի,ապրիլի 01-ից մինչև սույն թվականի հունիսի 30-ը ծխախոտի արտադրանքի իրացման վերաբերյալ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՍԱՀԱԿՅԱՆ

2021թ. մայիսի 05-ի

գ.Գառնի

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության
Կոտայքի մարզի Գառնի համայնք
Ստ. Շահումյան 4
garnihamaynq@mail.ru

# ՈՐՈՇՈՒՄ

«07» ՄԱՅԻՍԻ 2021ԹՎԱԿԱՆԻ N 130

## ԱՁ ՎԱՐԴՈՒՀԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ, ԾԽԱԽՈՏԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 45 հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և հիմք ընդունելով ԱՁ Վարդուհի Հովհաննիսյանի հայտը անդորրագիր N 14 ***որոշում եմ՝***

Կոտայքի մարզի Գառնի համայնքի Բաղրամյան փողոց թիվ 46/1 հասցեում գործող ԱՁ Վարդուհի Հովհաննիսյանին տալ թույլտվություն 2021 թվականի հունվարի 01-ից մինչև դեկտեմբերի 31-ը ոգելից և ալկոհոլային խմիչքների, ծխախոտի վաճառքի վերաբերյալ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՍԱՀԱԿՅԱՆ

2021թ. մայիսի 07-ի

գ.Գառնի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության
Կոտայքի մարզի Գառնի համայնք
Ստ. Շահումյան 4
garnihamaynq@mail.ru

ՈՐՈՇՈՒՄ

<<10>> ՄԱՅԻՍԻ 2021ԹՎԱԿԱՆԻ N 131

ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԵՎ ՆՐԱ ՎՐԱ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅԱՆԸ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՄԱՁԱՅՆ ԲԱԺԱՆՄԱՆ ՍԽԵՄԱՅԻ

Համաձայն <<Տեղական Ինքնակառավարման Մասին>> օրենքի 35 հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով ***որոշում եմ***՝

Գառնի համայնքում Անյա Սուրիկի Ալոյանին, Գոհար, Նազանի և Արտակ Բաղդասարյաններին համասեփականություն համարվող տնամերձ հողամասին ծածկագիր 07-021-0028-0065 և նրա վրա կառուցված շինությանը տրամադրել հասցե համաձայն բաժանման սխեմայի :

S 1= 0.1340 հա մասին գ.Գառնի Մ. Սարյան փողոց տուն 8

S 2= 0.0600 հա մասին գ.Գառնի Մ. Սարյան փողոց տուն 8/1

Համայնքի ղեկավար՝ Ա. Սահակյան

2021թ. մայիսի 10

գ.Գառնի

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության
Կոտայքի մարզի Գառնի համայնք
Ստ. Շահումյան 4
garnihamaynq@mail.ru

ՈՐՈՇՈՒՄ

<<10>> ՄԱՅԻՍԻ 2021ԹՎԱԿԱՆԻ N 132

ՔԱՂԱՔԱՑՈՒ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԵՎ ՆՐԱ ՎՐԱ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅԱՆԸ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՄԱՁԱՅՆ ԲԱԺԱՆՄԱՆ ՍԽԵՄԱՅԻ

Համաձայն <<Տեղական Ինքնակառավարման Մասին>> օրենքի 35 հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով ***որոշում եմ՝***

Գառնի համայնքում Գյուլվարդ Մուրադյանին սեփականություն համարվող տնամերձ հողամասին ծածկագիր 07-021-0067-0028 և նրա վրա կառուցված շինությանը տրամադրել հասցե համաձայն բաժանման սխեմայի ։

1. 0.06661 հա մասին գ.Գառնի Հ. Շիրազի փողոց տուն 1
2. 0.06128 հա մասին գ.Գառնի Հ. Շիրազի փողոց տուն 1/1

Համայնքի ղեկավար՝ Ա. Սահակյան

2021թ. մայիսի 10

գ.Գառնի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության
Կոտայքի մարզի Գառնի համայնք
Ստ. Շահումյան 4
garnihamaynq@mail.ru

## ՈՐՈՇՈՒՄ

<<11>> ՄԱՅԻՍԻ 2021ԹՎԱԿԱՆԻ N 133

ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ՝ ԳԱՌՆԻԻ ԳԵՂԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 118-րդ հոդվածի 6-րդ կետի, 64-րդ հոդվածի 16-րդ կետերի, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ և 38-րդ հոդվածների <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 75-րդ հոդվածի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հուլիսի 27-ի N 1144-Ն որոշման պահանջներով որոշում եմ՝

1. Վերականգնել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գառնի համայնքի համայնքային սեփականություն համարվող Գեղարվեստի դպրոցին հատկացված հողերի հողհատկացման հիմքերը:
2. Սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի հողհատկացման մակերեսները հիմք ընդունել քարտեզագրողի, գեոդեզիստի, չափագրողի հողաշինարարի որակավորում ունեցող անձի կողմից կազմված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված հողամասի հատակագծի տվյալների հիման վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՍԱՀԱԿՅԱՆ

2021թ. մայիսի 11

գ.Գառնի